«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
19 **նոյեմբերի** 2020 **թվականի** (**առցանց նիստի**)

«Առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի, առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրայի ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության մեխանիզմների կազմակերպման կարգերում» ժամանակավոր փոփոխություններ կատարելու մասին

Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում հայտարարված կարանտինային ռեժիմի և ուսումնական գործընթացը բացառապես առցանց կազմակերպելու սահմանափակումներով, ինչպես նաև ՀՊՏՀ ուսանողների ուսումնառության իրավունքների լիարժեք իրացման անհրաժեշտությունով պայմանավորված՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակում «Առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի, առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրայի ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության մեխանիզմների կազմակերպման կարգերում» կատարել հետևյալ ժամանակավոր փոփոխությունները.

I. **Փորձառություն**

1. 1,5 տարի տևողությամբ առկա մագիստրատուրայի և հեռակա մագիստրատուրայի գիտահետազոտական փորձառության լրացված և փորձառության վայրից նշանակված ղեկավարի ստորագրությամբ վավերացված օրագրերի և փորձառության վայրի կնիքով վավերացված բնութագրի ներկայացման պահանջը **չկիրառել** 2020-2021 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրայի փորձառություն անցնող ուսանողների նկատմամբ:
2. Առկա և հեռակա մագիստրատուրայի գիտամանկավարժական փորձառության լրացված և փորձառության վայրից նշանակված ղեկավարի ստորագրությամբ վավերացված օրագրերի պահանջը 2020-2021 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրայի փորձառություն անցնող ուսանողների նկատմամբ փոխարինել ամբիոնից նշանակված ղեկավարի զեկուցագրով:

1) Ուսանողը գիտամանկավարժական փորձառության հաշվետվությունը Pdf ձևաչափով ուղարկում է ամբիոնի կողմից նշանակված փորձառության ղեկավարին:
2) Ղեկավարը ստուգում է ուսանողի գիտամանկավարժական փորձառության հաշվետվությունը, կատարում է ճշգրտումներ պրակտիկայի ծրագրով սահմանված դասընթացներին ուսանողի մասնակցության առնչությամբ և հաճախումների վերաբերյալ Pdf ձևաչափով զեկուցագիրի հետ ուղարկում է ամբիոնի էլեկտրոնային հասցեին (էլ. հասցեները տե՛ս հավելված 2):

3. 1,5 տարի տևողությամբ առկա ուսուցման մագիստրատուրայի և հեռակա մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողների գիտահետազոտական փորձառության «**փորձառության վայրի հաճախումների**» բաղադրիչը (4 միավոր) միացնել «**փորձառության պաշտպանության**» բաղադրիչին և փորձառության գնահատման 20 միավորանոց համակարգում գնահատման բաղադրիչներ սահմանել
ա) «փորձառության հաշվետվությունը»՝ 4 միավոր
բ) «փորձառության առցանց պաշտպանությունը»՝ 16 միավոր:
4. Առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրայի գիտամանկավարժական փորձառության բազմագործոնային գնահատման համակարգը թողնել անփոփոխ՝ «**հաճախումներ**» բաղադրիչի համար սահմանելով 0-4 միջակայքում գնահատական «**ամբիոնի ղեկավարի գնահատականի**» բաղադրիչի համար՝ 0-4 միջակայքում գնահատական և «**փորձառության հաշվետվության պաշտպանության**» բաղադրիչի համար՝ 0-12 միջակայքում գնահատական:
5. Առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների փորձառությունների պաշտպանությունը կազմակերպել առցանց եղանակով՝ Zoom համակարգով:
   4.1. Ums.asue.am համակարգում ձևավորել ուսանողների փորձառությունների պաշտպանության ամփոփաթերթեր (կատարված ուղղումների համապատասխան կշիռներով)՝ առանց համարակալման և գնահատականներն անցկացնել էլեկտրոնային ամփոփաթերթերում:
   4.2. Քննաշրջանի ավարտից հետո ամփոփաթերթերը հանձնել ՀՊՏՀ ուսումնական գործընթացի կազմակերպման բաժին՝ համարակալելու և կնիքով վավերացնելու համար:
   4.3. Փորձառության առցանց պաշտպանությունը կազմակերպել ամբիոնից նշանակված բոլոր ղեկավարներից և ամբիոնի վարիչից կազմված հանձնաժողովով:
   4.4. Ապահովել փորձառության պաշտպանության ընթացքին հանձնաժողովի բոլոր անդամների համաժամանակյա ներկայությունը:
   4.5. Ապահովել փորձառության պաշտպանության ընթացքին ակադեմիական խմբի բոլոր ուսանողների ներկայությունը (խմբի բոլոր անդամներին հասանելի

սոցիալական հարթակում Zoom համապատասխան տեսակոնֆերանսի հիպերհղումը զետեղելու ճանապարհով):

4.6. Իրականացնել փորձառության պաշտպանության ամբողջ ընթացքի տեսաձայնագրություն և պահպանել ձայնագրությունները ՀՊՏՀ սերվերում:

5. Փորձառությունների պաշտպանության ընթացքի բողոքարկման դիմումների ընդունումն իրականացնել boghokarkum@asue.am միասնական բողոքարկման հարթակով և դրա տվյալները հասանելի դարձնել ուսանողներին առնվազն ՀՊՏՀ կայքէջով, ֆեյսբուքյան օգտահաշվով, ինչպես նաև առցանց պաշտպանության հենց սկզբից առցանց տեսակոնֆերանսում նույնպես զետեղել հայտարարություն՝ բողոքարկման առցանց հարթակի էլեկտրոնային հասցեի վերաբերյալ:

II. **Դասընթացների բազմագործոնային գնահատում**

6. Առկա ուսուցման բակալավրիատի անհատական աշխատանք պարունակող և քննությամբ ավարտվող դասընթացների «**անհատական աշխատանքի**» բաղադրիչը 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում հանել, իսկ դրա 2 **միավոր** գնահատման կշիռը միացնել «**հաճախումների և ակտիվության**» բաղադրիչին և վերջինիս կշիռը սահմանել 8 **միավոր**:
7. Հեռակա ուսուցման բակալավրիատի անհատական աշխատանք պարունակող և քննությամբ ավարտվող դասընթացների «**անհատական աշխատանքի**» բաղադրիչը 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում հանել, իսկ դրա 8 **միավոր** գնահատման կշիռը միացնել «**ամփոփիչ քննության**» բաղադրիչին և վերջինիս կշիռը սահմանել 20 **միավոր**:
8. 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրայի քննությամբ ավարտվող և գիտահետազոտական աշխատանք պարունակող մոդուլներում գնահատման բաղադրիչը թողնել անփոփոխ: Առկա և հեռակա մագիստրատուրայում քննությամբ ավարտվող և գիտահետազոտական աշխատանք պարունակող մոդուլների համար «**գիտահետազոտական աշխատանքի**» բաղադրիչի գնահատման կշիռը սահմանել 0-4 միավոր, «**հաճախումների և ակտիվության**» բաղադրիչի գնահատման կշիռը՝ 0-6 միավոր «**ամփոփիչ քննության**» բաղադրիչի գնահատման կշիռը՝ 0-10 միավոր:
9. 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրայի քննությամբ ավարտվող և փորձառություն պարունակող մոդուլներում «**փորձառության**» բաղադրիչը միացնել «**հաճախումների և ակտիվության**» բաղադրիչին: «**Հաճախումների և ակտիվության**» բաղադրիչի գնահատման կշիռը սահմանել 0-10 միավոր, իսկ «**ամփոփիչ քննության**» բաղադրիչի գնահատման կշիռը՝ 0-10 միավոր:

10. 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրայի ստուգարքով ավարտվող մոդուլներում «**հաճախումների և ակտիվության**» բաղադրիչի գնահատման կշիռը սահմանել 0-12 միավոր, իսկ «**ամփոփիչ քննության**» բաղադրիչի գնահատման կշիռը՝ 0-8 միավոր:

III. **Մագիստրոսական թեզերի պաշտպանություն**

11. ՀՊՏՀ ՊՈԱԿ-ում 2020-2021 ուսումնական տարում 1,5 տարի տևողությամբ առկա մագիստրատուրայի և հեռակա մագիստրատուրայի ուսանողների մագիստրոսական թեզերի առցանց պաշտպանության ներկայացման, պաշտպանության կազմակերպման և ամփոփման գործընթացը կազմակերպել սույն որոշման Հավելված 1-ով սահմանված ընթացակարգով:

IV. **Վարչարարություն**

12. Հայաստանի Հանրապետությունում սույն թվական սեպտեմբերի 27-ին հայտարարված ռազմական դրության հետևանքով ռազմական գործողություններին մասնակցող ուսանողների, կորոնավիրուսային հիվանդությամբ հիվանդ և կամ ՀՀ սահմանների փակ լինելու հետևանքով ՀՀ-ում չգտնվող ուսանողների կողմից ուսման վարձի վճարման ուշացումների, դրանով պայմանավորված նրանց հրամանագրումների, տարբերությունների հանձնման, ինչպես նաև գիտելիքի ստուգման ու վարչարարության նկատմամբ սահմանել ճկուն գրաֆիկ և որոշումների ընդունումը մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը վերապահել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտորատին:
13. 2020-2021 ուսումնական տարում ուսանողների բացակայությունները մինչև սույն թվականի նոյեմբերի 20-ը ներառյալ համարել հարգելի: Նոյեմբերի 21-ից հետո հարգելի համարել միայն ՀՊՏՀ ՊՈԱԿ «Առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և առկա ուսուցման մագիստրատուրայի ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության մեխանիզմների կազմակերպման կարգերում» սահմանված դեպքերը:
14. Բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա կրթաձևերում անփոփոխ թողնել դրանց ուսումնական պլաններով 2020-2021 ուս տարվա համար սահմանված ***քննությամբ ավարտվող դասընթացների թիվը:***

V. **Անցումային դրույթներ**

15. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:
16. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՊՏՀ ՊՈԱԿ-ում 2020-2021 **ուսումնական տարում** 1,5 **տարի տևողությամբ առկա մագիստրատուրայի և հեռակա մագիստրատուրայի ուսանողների մագիստրոսական թեզերի առցանց պաշտպանության ներկայացման**, **պաշտպանության կազմակերպման և** ums.asue.am **համակարգով պաշտպանության արդյունքների ամփոփման ընթացակարգ**

I. **Մագիստրոսական թեզերի առցանց պաշտպանության ներկայացման**, **հրապարակային պաշտպանության և գրախոսման ընթացակարգը**

1. ՀՊՏՀ ուսանողների մագիստրոսական թեզը (այսուհետ՝ աշխատանք) առցանց պաշտպանության է երաշխավորում ամբիոնի կողմից նշանակված ղեկավարը:
2. Ամբիոնից կողմից նշանակված ղեկավարը կարծիք չի գրում:
3. Թեզի տիտղոսաթերթին ամբիոնից նշանակված ղեկավարի և ամբիոնի վարիչի ստորագրությունները վավերացվում են հետևյալ հաջորդականությամբ.
   1) Ուսանողը թեզի վերջնական տարբերակը Pdf ձևաչափով ուղարկում է ամբիոնի կողմից նշանակված ղեկավարին:
   2) Ղեկավարը ստուգում է ուսանողի թեզը և հրապարակային պաշտպանության երաշխավորելու պարագայում՝ Pdf ձևաչափով ուղարկում է թեման հաստատած ամբիոնի էլեկտրոնային հասցեին (էլ. հասցեները տե՛ս հավելված 2):
   3) Ամբիոնի վարիչը թեզն ուղարկում է գրախոսության ՀՊՏՀ այլ ամբիոններ՝ հավելվածում 1-ում ներկայացված համապատասխան էլեկտրոնային փոստի հասցեով և հավելված 3-ի տեքստով:
   4) Ամբիոնի վարիչի կողմից գրախոսության ուղարկելուց հետո համարվում է, որ թեզի ղեկավարը և ամբիոնի վարիչը վավերացրել են հրապարակային պաշտպանության ներկայացված աշխատանքը:
4. Գրախոսությունն իրականացնող ամբիոնի վարիչն իր ամբիոնից նշանակում է գրախոսող և 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպում է թեզի գրախոսությունը:
5. Գրախոսված թեզը և գրախոսությունը հետ է ուղարկվում թեզի թեման հաստատած ամբիոնի էլեկտրոնային փոստի հասցեին (Հավելված 1):
6. Թեզի թեման հաստատած ամբիոնի վարիչը թեզը և գրախոսությունը ուղարկում է asue.avartakanner.tezer@gmail.com ՀՊՏՀ միասնական էլեկտրոնային հարթակին, ինչպես նաև ապահովում է գրախոսության հասանելիությունը ուսանողին:
7. Գրախոսության փաստաթղթաշրջանառությունը վավերական է բացառապես ՀՊՏՀ ամբիոնների համար ստեղծված էլեկտրոնային հասցեների միջև:

8. asue.avartakanner.tezer@gmail.com էլեկտրոնային հասցեին ուղարկված մագիստրոսական թեզերը և դրանց գրախոսությունները արխիվացվում են ՀՊՏՀ էլեկտրոնային սարքերի սպասարկման և ծրագրային ապահովման ստորաբաժանման պատասխանատու աշխատակցի կողմից:
9. asue.avartakanner.tezer@gmail.com էլեկտրոնային հասցեից դուրս եկող նամակարգությունը համակարգվում է ՀՊՏՀ էլեկտրոնային սարքերի սպասարկման և ծրագրային ապահովման ստորաբաժանման պատասխանատու աշխատակցի կողմից:

II. Մագիստրոսական թեզը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին տրամադրելու, պաշտպանող ուսանողների ցուցակի ձևավորման և հանձնաժողովի անդամներին գնահատման հարթակ մուտքի տրամադրման ընթացակարգը

10. Ֆակուլտետի դեկանատը ums.asue.am հարթակ է վերբեռնում ամփոփիչ ատեստավորման ենթակա ուսանողների անձնական տվյալները (անուն ազգանուն, հայրանուն՝ հայերեն և անգլերեն լեզուներով, անձնագրի համար և սերիա, կուրս, հոսք, խումբ, աշխատանքի թեման՝ հայերեն և անգլերեն լեզուներով):
11. Ֆակուլտետի դեկանատը ums.asue.am հարթակ է վերբեռնում ամփոփիչ ատեստավորման ենթակա երկտարեցի ուսանողների անձնական տվյալները (անուն ազգանուն, հայրանուն՝ հայերեն և անգլերեն լեզուներով, անձնագրի համար և սերիա, կուրս, հոսք, խումբ, աշխատանքի թեմա՝ այն ուսանողների համար, ովքեր մագիստրոսական թեզ են պաշտպանելու և հավելյալ քննության անվանում՝ այն ուսանողների համար, որոնց ամփոփիչ ատեստավորումը բանավոր քննության եղանակով է իրականացվելու:
12. Ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաները հայերեն և անգլերեն լեզուներով դեկանատին տրամադրում են համապատասխան մասնագիտական ամբիոնները:
13. Ֆակուլտետի դեկանը ums.asue.am հարթակ է վերբեռնում ՀՊՏՀ ռեկտորի համապատասխան հրամանով ձևավորված ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմը: Մուտքագրվում է հանձնաժողովի նախագահի և անդմների անուն ազգանունը, գիտական աստիճանը, գիտական կոչումը, աշխատավայրը (դրսի անդամների համար), հանձնաժողովում կարգավիճակը՝ նախագահ, անդամ
14. ՀՊՏՀ էլեկտրոնային սարքերի սպասարկման և ծրագրային ապահովման ստորաբաժանման պատասխանատու աշխատակիցը ums.asue.am հարթակում ՀՊՏՀ ռեկտորի հրամանով ձևավորված հանձնաժողովների անդամների համար ձևավորում է համապատասխան մուտքանուններ և գաղտնաբառեր (ըստ առանձին

հանձնաժողովների) և տրամադրում տվյալ հանձնաժողովների ձևավորման զեկուցագրերը կազմած ամբիոնի վարիչին:

15. Ամբիոնների վարիչը ums.asue.am հարթակ մուտք գործելու մուտքանունները և գաղտնաբառերը տրամադրում է համապատասխան հանձնաժողովի անդամներին:
16. Գաղտնաբառը մեկանգամյա օգտագործման է և ենթակա է փոփոխման. հանձնաժողովի անդամը առաջին անգամ ums.asue.am հարթակ մուտք գործելուց հետո փոփոխում է գաղտնաբառը:
17. Հանձնաժողովի նախագահին և դրսից անդամին ums.asue.am հարթակում տեսանելի է միայն ամփոփիչ ատեստավորման բլոկը՝ մուտք գործելով համակարգ վերջինների համար միանգամից բացվում է այդ բլոկը:
18. Բավարար թվով գրախոսված թեզեր հավաքագրելուց հետո ամբիոնի վարիչը ֆակուլտետի դեկանին տալիս է գրավոր տեղեկատվություն այն ուսանողների վերաբերյալ, որոնց մագիստրոսական թեզերն ամբողջովին պատրաստ են հրապարակային պաշտպանության:
19. ՀՊՏՀ էլեկտրոնային սարքերի սպասարկման և ծրագրային ապահովման ստորաբաժանման պատասխանատու աշխատակիցը ums.asue.am հարթակ է վերբեռնում մագիստրոսական թեզերը և գրախոսությունները (Pdf ձևաչափով կամ դիտման հնարավորություն ընձեռող լինքի ձևաչափով):
20. Գրավոր տեղեկատվությունը ֆակուլտետի դեկանին տրամադրվում է էլեկտրոնային փաստաթղթով Հավելված 4-ին համապատասխան:
21. Տեղեկատվությունը ստանալուց հետո ֆակուլտետի դեկանը ums.asue.am հարթակում պատրաստի աշխատանք ունեցող ուսանողներից ձևավորում է տվյալ օրվա պաշտպանության ցուցակը և էլեկտրոնային տեղեկագրերը:
22. Ֆակուլտետի դեկանը երկտարեցի ուսանողների համար, ըստ կրթաձերի, կազմում է ամփոփիչ ատեստավորման առանձին էլեկտրոնային տեղեկագիր:
23. Պաշտպանության օրվա ցուցակը կազմվում է առնվազն 3 աշխատանքային օր առաջ:
24. Ցուցակը ձևավորելուց հետո հանձնաժողովի անդամները ums.asue.am հարթակում ստանում են ծանուցում՝ պաշտպանության օրվա և պաշտպանողների ցուցակի և Zoom համակարգով տեսակոնֆերանսին մուտքի հնարավորություն ընձեռող լինքի վերաբերյալ:

III. **Մագիստրոսական թեզերի առցանց պաշտպանության ընթացակարգը**

25. Մագիստրոսական թեզերի պաշտպանությունը կազմակերպվում է առցանց եղանակով՝ Zoom համակարգով:
26. Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցող ուսանողները և հանձնաժողովի անդամները պարտավոր են ունենալ Zoom օգտահաշիվներ (տեսակապի հնարավորությամբ)՝ պաշտպանությանը մասնակցելու համար:

27. Մասնագիտական ամբիոնի վարիչը պետք է ապահովի Zoom տեսակոնֆերանսին մուտքի հնարավորություն ընձեռող լինքն ամփոփիչ ատեստավորմանը մասնակցող ուսանողներին, հանձնաժողովի անդամներին, ֆակուլտետի դեկանին և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին նախօրոք տրամադրելու գործընթացը:
28. Տեսակոնֆերանսի լինքը կարող է տրամադրվել նաև ուսանողի աշխատանքը ղեկավարած դասախոսին՝ ըստ անհրաժեշտության:
29. Առցանց պաշտպանության օրը յուրաքանչյուր պաշտպանող ուսանողի տրվում է մինչև 30 րոպե՝ իր աշխատանքը ներկայացնելու և մինչև 15 րոպե հարցադրումներին պատասխանելու համար:
30. Ուսանողը պետք է ունենա պրեզենտացիոն նյութեր, որոնք հանձնաժողովի դիտարկմանը կներկայացնի համատեղ դիտման (screen share) ռեժիմում:
31. Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամների հարցերը մուտքագրում է ums.asue.am հարթակում ձևավորված էլեկտրոնային գրանցամատյանում:
32. Տեսակոնֆերանսը պլանավորած ամբիոնի վարիչը (քարտուղարը) պարտավոր է տեսաձայնագրել և արխիվացնել տեսակոնֆերանսի ամբողջ ընթացքը:

III. **Ուսանողների գնահատումը, գնահատականի ամփոփումը և գրանցումը** ums.asue.am **հարթակում ձևավորված ամփոփաթերթում**

33. Տվյալ օրվա ցուցակում ներառված բոլոր ուսանողների պաշտպանության ավարտից հետո՝ արդյունքների քննարկումը տեղի է հանձնաժողովի փակ նիստում:
34. Գնահատականը որոշվում է հանձնաժողովի անդամների կողմից նշանականված գնահատականների միջին թվաբանականով:
35. Էլեկտրոնային մատյանում գնահատականները մուտքագրվում են փակ նիստի արդյունքներով՝ նախագահի կողմից:
36. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ուսանողի վերջնական գնահատականը հաստատում է ums.asue.am համակարգի իր էջում:
37. Հանձնաժողովի նախագահը տեսնում է բոլոր անդամների հաստատումները և վերջնական հաստատում է գնահատականը, որը այլևս փոփոխման ենթակա չէ:
38. Ամփոփաթերթը ձևավորելուց հետո պաշտպանության տվյալ օրվա ցուցակում ներառված բոլոր ուսանողները կրկին հրավիրվում են միանալու պաշտպանության տեսակոնֆերանսին:
39. Տեսակոնֆերանսի ընթացքում հանձնաժողովի նախագահը հայտարարում է ուսանողների անունները և հնչեցնում գնահատականները:
40. Ամփոփիչ ատեստավորման գնահատականը ենթակա է լրացուցիչ քննարկման և բողոքարկման, համաձայն հետևյալ ընթացակարգային պահանջների.

1) գնահատականի վերաբերյալ շրջանավարտի բողոքն ընդունվում և դիտարկվում է միայն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից ընթացակարգային խախտումների առկայության դեպքում,

2) շրջանավարտն իրավունք ունի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովից պահանջելու լրացուցիչ մեկնաբանություններ իր գնահատականի վերաբերյալ:

41. Գնահատականի հետ անհամաձայնություն հայտնած ուսանողը պարտավոր է տեսակոնֆերանսի ընթացքում բանավոր կերպով այդ մասին տեղեկացնել հանձնաժողովին և արդյունքների հրապարակումից հետո 1 ժամվա ընթացքում boghokarkum@asue.am էլեկտրոնային փոստի հասցեով ներկայացնել բողոքարկման դիմում:
42. Բողոքարկման դիմումի մեջ ուսանողը նշում է իր անունը, ազգանունը, հայրանունը, կուրսը, ամբիոնը, պաշտպանության օրը, հեռախոսահամարը:
43. Բողոքարկման գործընթացը համակարգում է ՀՊՏՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը:
44. Ամբիոնը բողոքարկման նամակը ստանալուց հետո նույն օրվա ընթացքում ձևավորում է նոր տեսակոնֆերանս, որի մասնակցության հղումը ուղարկում է բողոքարկում ներկայացրած ուսանողին, հանձնաժողովի անդամներին և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:
45. Բողոքարկման նիստի ընթացքում բողոքարման հանձնաժողովը ուսանողի ներկայությամբ դիտում է պաշտպանության տեսաձայնագրությունը: Բողոքարկման արդյունքում, բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների պարզ մեծամասնությամբ որոշում է կայացվում.

1) Գնահատականը թողնել անփոփոխ,

2) Գնահատականը բարձրացնել,

3) Գնահատականը իջեցնել:

46. Ընդունված որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն ums.asue.am հարթակում, որը հաստատում է հանձնաժողովի նախագահը:
47. Բողոքարկման ընթացքմ գործում է թեժ գիծ՝
48. Բողոքարկման նիստի ընթացքը պարտադիր տեսաձայնագրվում և արխիվացվում է:
49. Ամփոփիչ ատեստավորման ամփոփման ձև 3 արձանագրությունը ստացվում է տվյալ կուրսի բոլոր ուսանողների ցուցակները փակելուց հետո:
50. Ամփոփիչ ատեստավորման տվյալները հետագայում արխիվացվում են:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Պաշտպանության գործընթացում գործող ամբիոնային էլեկտրոնային փոստի հասցեներ

Ամբիոնը	Login
Կառավարման	Asue.karavarman.ambion@gmail.com
Աշխատանքի տնտեսագիտության	Asue.ashkhatanqi.tntesagit.ambion@gmail.com
Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկ. գործ	Asue.mikroekonomikayi.ambion@gmail.com
Վիճակագրության	Asue.vichakagrutyan.ambion@gmail.com
Կառավարչական հաշվառման և աուդիտի	Asue.karavarch.hashv.auditi.ambion@gmail.com
Ֆինանսական հաշվառման	Asue.finansakan.hashvarman.ambion@gmail.com
Մարքեթինգի	Asue.marqetingi.ambion@gmail.com
Բիզնեսի կազմակերպման	Asue.biznesi.kazmakerpman.ambion@gmail.com
Ֆինանսների	Asue.finansneri.ambion@gmail.com
Բանկային և ապահովագր. գործի	Asue.bankayin.gorci.ambion@gmail.com
Միջազգային տնտեսական հարաբերություն	Asue.mth.ambion@gmail.com
Տնտեսագիտության տեսության	Asue.tntesagit.tesutyan.ambion@gmail.com
Մակրոէկոնոմիկայի	Asue.makroekonomikayi.ambion@gmail.com
Բնօգտագործման տնտեսագիտության	Asue.bnogtagorcman.tntes.ambion@gmail.com
Մաթ մեթոդների	Asue.mat.metodneri.ambion@gmail.com
Ինֆորմատիկայի	Asue.informatikayi.ambion@gmail.com

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի _____ ամբիոնի վարիչ
պարոն (տիկին) _____-ին

Գրախոսության է ուղարկվում «_____» մասնագիտության «——— ————» կրթական ծրագրի առկա (հեռակա) ուսուցման բակալավրիատի (մագիստրատուրայի) ուսանող (ուհի) _____ «_____» թեմայով մագիստրոսական թեզը:
Խնդրում ենք կազմակերպել թեզի գրախոսությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրախոսություններին ներկայացվող պահանջներին համապատասխան:

_____ ամբիոնի վարիչ _____
Ամսաթիվ

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Ամբիոնը——————————————————— Մագիստրոսական թեզի պաշտպանության օրը և ժամը

ՑՈՒՑԱԿ

	Ուսանողի անուն, ազգանուն	**Ավարտական աշխատանքի թեման**	**Ղեկավար**	**Գրախոս**
1				
2				
3				